

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՆԻՍՏԻ**

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Մ.Քարտաշյանի

Փ.Կարապետյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրափոխման հոգիների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձի պարտքերի մարման գործընթացը առ.01.09.2014թ դրությամբ

/Վ. Մկրտչյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ֆինանսական և
սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ /

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 -րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 24-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ հարցը՝ ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձի պարտքերի մարման

գործընթացը առ 01.09.2014թ դրությամբ, ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը: ՎՄկրտչյանը իր տեղեկատվությամբ մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 1301770,5 հազար դրամի դիմաց կազմել են 1074632,7 հազար դրամ, կատարողականը՝ 82,6 տոկոս: Հավաքագրման մակարդակը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 4,1 տոկոսով /տեղեկատվությունը կցվում է/:

Մարզպետ Ա. Ղահրամանյանը անդրադառնալով ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանի կողմից ներկայացված տեղեկատվությանը 50 տոկոսից ցածր հավաքագրում ապահոված և աշխատավարձերի պարտքեր ունեցող ընդհանուր թվով 13 համայնքների/Առատաշեն, Արաքս/Էջմ/, Ծաղկալանջ, Հայթաղ, Գեփաշեն, Վարդանաշեն, Լուկաշին, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արվագերս, Նորապատ, Ջրաշեն, Դալարիկ/ ղեկավարներին առաջարկեց՝

1. սեղմ ժամկետում ապահովել սեփական եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշներ՝ դրանք հասցնելով 80 տոկոսի.

2. աշխատանքներ իրականացնել 500 հազար դրամ և ավել պարտք ունեցող հարկատուների հետ օրենսդրությանը համապատասխան գործընթաց սկսելու ուղղությամբ՝ համագործակցելով ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի հետ և մեկամսյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան.

3. ձեռնարկել գործնական միջոցներ աշխատավարձի կուտակված ընթացիկ պարտքերը մարելու և նոր պարտքերը բացառելու ուղղությամբ:

Օրակարգային հարցերի համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված: